

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

11.06.2014

Գեղարքունիքի մարզպետարանում Գեղարքունիքի մարզպետ, Գեղարքունիքի մարզի գորակոչային հանձնաժողովի նախագահ Ռաֆիկ Գրիգորյանն անցկացրեց գորակոչային հանձնաժողովի հերթական նիստը: Նիստին մասնակցում էին մարզային հանձնաժողովի անդամներ ՀՀ ԶՈՒ երկրորդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Պողոս Պողոսյանը, ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ Արսեն Ադամյանը, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Սեւանի կայազորի պետ, գնդապետ Հակոբ Վարդանյանը, Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Ճամբարակի եւ Սեւանի տարածքային զինվորական կոմիսարները: Նիստի օրակարգում ընդգրկված էին շրջանային զինկոմների հաշվետվությունները՝ 2014 թվականի գարնանային գորակոչի նախապատրաստական աշխատանքների եւ ընթացքի մասին եւ երկու քաղաքացիների դիմումների քննարկումը՝ տարկետման իրավունքից օգտվելու վերաբերյալ: Զինկոմները զեկուցեցին 2014 թվականի ամառային գորակոչի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման եւ անցկացման մասին՝ խոստանալով կատարել իրենց տրված պլանային առաջադրանքը: Հաշվետվություններում նրանք անդրադարձան նաեւ զինկոմիսարիատներին կից բժշկափորձագիտական հանձնաժողովների գործունեությանը: Մարզպետը եւ կորպուսի հրամանատարը հորդորեցին զինկոմներին՝ ամենայն պատասխանատվությամբ եւ մանրամասնորեն իրականացնել գորակոչային տարիքի երիտասարդների բուժզննումները՝ ամեն կերպ բացառելով հիվանդ երիտասարդներին Հայոց բանակ գորակոչելու դեպքերը: Այնուհետեւ հանձնաժողովի անդամները քննարկեցին Վարդենիկ եւ Չորագյուղ համայնքների երկու բնակիչների կողմից հանձնաժողովին ուղղված դիմումները՝ ընտանեկան ծանր դժբախտությունների պատճառով ծերերի խնամքը ստանձնած երիտասարդներին տարկետման հնարավորություն տալու վերաբերյալ: Մարզային հանձնաժողովի անդամները տվեցին իրենց համաձայնությունը՝ վերջնական որոշումը վերապահելով Հանրապետական գորակոչային հանձնաժողովին: Ամփոփելով նիստի ընթացքում հնչաց առաջարկները եւ բարձրացված հիմնահարցերը՝ Գեղարքունիքի մարզպետ, մարզի գորակոչային հանձնաժողովի նախագահը հանձնարարեց մարզի տարածքային զինկոմներին՝ կատարել Հանրապետական գորակոչային հանձնաժողովի կողմից տրված բոլոր հանձնարարականները, խորացնել համագործակցությունը համայնքների ղեկավարների, ՀՀ Ոստիկանության մարզային ստորաբաժանումների, ՀՀ ԶՈՒ բանակային երկրորդ կորպուսի, ուժային այլ կառույցների հետ: Մարզի գորակոչային հանձնաժողովի անդամ, ՀՀ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ Արսեն Ադամյանին հանձնարարվեց՝ զինկոմիսարիատներից մինչեւ Հանրապետական հավաքակալային նորակոչիկների մեկնման ժամանակ

ապահովել ճանապարհային ոստիկանության աշխատակիցների ներկայությունը, իսկ գորակոչի օրերին զինկոմիսարիատների տարածքում ուժեղացնել ոստիկանների կողմից իրականացվող հսկողությունը: Հանձնաժողովի բոլոր անդամներին հանձնարարվեց՝ քարոզչական բավարար աշխատանքներ տանել ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից վերջին շրջանում իրականացված բարեփոխումների վերաբերյալ՝ համագործակցելով տեղական եւ հանրապետական ՁԼՄ-ների հետ: Որոշվեց առաջիկայում մարզային գորակոչային հանձնաժողովի անդամների ջանքերով կազմակերպել այն ծնողների այցերը գորամասեր, որոնց զավակները ծառայում են Գեղարքունիքի մարզի ՀՀ ՁՈԻ բանակային ստորաբաժանումներում: Նիստից հետո մարզի ղեկավարը և հանձնաժողովի անդամները Գավառի տարածքային զինկոմիսարիատում մասնակցեցին նորակոչիկներին Հայոց բանակ ճանապարհելու հանդիսավոր արարողությանը: